ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1870-Ա « 30 » հունիսի 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 1216-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով, 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

1. Սահմանել, որ.

1) համապատասխան պարզաբանումներ և խորհրդատվություն ստանալու նպատակով, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների մոտ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է Երևանի քաղաքապետարան դիմած անձանց դիմումների քննարկման արդյունքներով՝ դիմումի մերժման դեպքում, անձանց գրավոր պահանջի հիման վրա՝ դիմումի մերժման մասին պատասխանը դիմում ներկայացրած անձի կողմից ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների բացակայության, ինչպես նաև քաղաքացիների ընդունելությունը կազմակերպելու անհնարինության դեպքում՝ ընդունելությունը կազմակերպվում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարի (վարչության պետ, բաժնի պետ), տեղակալի/տեղակալներից մեկի կամ ստորաբաժանման այլ աշխատակցի կողմից.

3) ընդունելություն կազմակերպելու վերաբերյալ դիմումատուի պահանջը պետք է ձևակերպվի գրավոր՝ պարտադիր նշելով այն դիմումը, որի մերժման արդյունքում առաջացել է ընդունելության կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև ընդունելության կազմակերպման արդյունքում պարզաբանման ենթակա հնարավոր հարցերի շրջանակը.

4) ընդունելություն կազմակերպելու վերաբերյալ դիմումատուի պահանջը ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, դիմումատուին ներկայացվում է պատասխան՝ գրավոր, իսկ հնարավորության դեպքում նաև հեռախոսակապի միջոցով: Դիմումատուի գրավոր պահանջը բավարարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների մոտ ընդունելության կազմակերպումը

հաստատելու դեպքում՝ նշվում է այն պատասխանատու կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումը, որի մոտ իրականացվելու է ընդունելությունը, ընդունելության կազմակերպման վայրը և ժամանակը (տարին, ամիսը, ամսաթիվը, օրը, ժամը).

5) ընդունելություն կազմակերպելու վերաբերյալ դիմումները քննարկվում են և դրանց պատասխանները տրվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝ վերջինիս տեղակալներից մեկի կամ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից մեկի կողմից (այսուհետև՝ Պատասխանատու անձ):

6) մերժվում են ընդունելություն կազմակերպելու վերաբերյալ այն դիմումները.

ա. որոնց հիմքում ընկած գործերը մերժվել են ակնհայտորեն հիմնավոր պատճառներով, կամ պարունակում են սպառնալիքներ կամ որևէ անձին ուղղված վիրավորանք.

բ. որոնք ներկայացվել են սույն որոշմամբ սահմանված ժամկետների և պահանջների խախտմամբ.

գ. որոնց առարկայի և/կամ պարզաբանման ենթակա հարցերի առնչությամբ արդեն իսկ կազմակերպվել է ընդունելություն, որի արդյունքում գործը չի վերանայվել.

7) ընդունելություն կազմակերպելու օրվան նախորդող աշխատանքային օրը՝ մինչև ժամը 12:00-ը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին Պատասխանատու անձի կողմից տրամադրվում է հերթագրված քաղաքացիների ամփոփված ցուցակը, նրանց ներկայացրած դիմումները, դրանց կից փաստաթղթերը և մերժման առարկային վերաբերվող ամբողջական գործը.

8)քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ սույն որոշման հավելվածում նախատեսված պարբերականությամբ: Ընդունելությունները տեսաձայնագրվում են.

9) քաղաքացիների ընդունելությանը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, կարող են մասնակցել նաև աշխատակազմի այլ պաշտոնատար անձինք.

10) քաղաքացիների ընդունելության ընթացքում քաղաքացու կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրված պարզաբանումների վերաբերյալ կազմվում է արձանագրություն.

11) քաղաքացին ընդունելության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով և ստանում է շենք մուտք գործելու անցագիր: Հայերենին չտիրապետող անձինք կարող են ներկայանալ թարգմանչի հետ, անձը կարող է ներկայանալ փաստաբանի կամ ներկայացուցչի հետ միասին (ոչ ավելի, քան 3 անձ):

2. Ընդունել ի գիտություն, որ Երևանի վարչական շրջանների ղեկավարների մոտ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր հինգշաբթի՝ Երևանի վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետարանում քաղաքացիների ընդունելության կարգի վերաբերյալ իրազեկումն ապահովել Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.Yerevan.am), ինչպես նաև Facebook, Telegram սոցիալական հարթակներում:

4. Ուժը կորցած ճանաչել Երևանի քաղաքապետի 2019 թվականի ապրիլի 16-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների կողմից քաղաքացիների ընդունելություն կազմակերպելու ժամանակացույցը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2012

թվականի հունիսի 7-ի N 4400-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1216-Ա որոշումը:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել սույն որոշմամբ նշված պաշտոնատար անձանց վրա:

6.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441

Հավելված
Երևանի քաղաքապետի
2023թ. հունիսի 30-ի
հ. 1870 –Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ընդունելության օրը	Ընդունելության ժամը	Ընդունելության վայրը	Ոլորտային պատասխանատու ստորաբաժանումը
Երկուշաբթի	14:00-16:00	Արգիշտիի փողոց, հ.1	Կոմունալ տնտեսության վարչություն
	16:00-18:00		Անշարժ գույքի կառավարման վարչություն
	14:00-16:00	Փ.Բուզանդի փողոց, հ.1/3	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն
Երեքշաբթի	14:00-16:00	Արգիշտիի փողոց, հ.1	Հանրակրթության վարչություն, Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն
	16:00-18:00		Շինարարության և բարեկարգման վարչություն
	14:00-16:00	Փ.Բուզանդի փողոց, հ.1/3	Տրանսպորտի վարչություն
Չորեքշաբթի	14:00-16:00	Արգիշտիի փողոց, հ.1	Մշակույթի և տուրիզմի վարչություն, Բնապահպանության վարչություն
	16:00-18:00		Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին
	14:00-16:00	Փ.Բուզանդի փողոց, հ.1/3	Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն

Հինգշաբթի	14:00-16:00	Արգիշտիի փողոց, հ.1	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն
	16:00-18:00		Առողջապահության վարչություն
	14:00-16:00	Փ.Բուզանդի փողոց, հ.1/3	Առևտրի և ծառայությունների վարչություն
Ուրբաթ	14:00-16:00	Արգիշտիի փողոց, հ.1	Իրավաբանական վարչություն
	16:00-18:00		Աշխատակազմի այլ կառուցվածքային ստորաբաժանումներ
	14:00-16:00	Փ.Բուզանդի փողոց, հ.1/3	Հասարակական կարգի պահպանության ծառայություն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441